ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.03.2014թ.
213-ի 7

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Սեյրան Օհանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Օհանյան,

Մեզ է դիմել Գյումրի քաղաքի Շահինյան 6ա շենքի բնակիչ Էդվարդ Կառլենի Հովհաննիսյանը եւ խնդրել է իրեն օգնել իր որդու՝ Կառլեն Էդվարդի Հովհաննիսյանի (ծնվ. 14 նոյեմբերի 1995թ.) համար տեղեկություն ստանալու հարցում: Կառլենը Հովհաննիսյանը սովորում է Վ. Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիայի առաջին կուրսում: 2014թ. հունվարի 19-ին շարային վարժանքների ժամանակ ունեցել է երկու ուշագնացության նոպա եւ տեղափոխվել է Մուրացանի հանրապետական զինվորական հոսպիտալ, որտեղ եւ մինչ օրս գտնվում է: Կառլեն Հովհաննիսյանը ունեցել է նոպաներ եւ Երեբունի բժշկական կենտրոնում բժշկական հաշվառման է անցել Յուվենիլ միոկլոնիկ էպիլեպսիա հաճախակի միոկլոնիաներով եւ գեներալիզացված տոնիկ-կլոնիկ նոպաներով, ԷԷԳ փոփոխություններով աշխորոշմամբ: 2014 թ. հունվարի 29-ից 30-ը հոսպիտալի նշանակմամբ գտնվել է Երեբունի բժշկական կենտրոնում, ստուգում է անցել, որով հաստատվել է նույն ախտորոշումը: Կառլեն Էդվարդի Հովհաննիսյանը ավելի քան երկու ամիս է գտնվում է հոսպիտալում եւ ոչ մի հստակ որոշում չեն կայացնում: Հիմա նա ընդունում է ՀԷԴ դեղեր:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ո՞ր փուլում է գտնվում Վ. Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիայում սովորելու եւ/կամ առհասարակ զինվորական ծառայության պիտանելության վերաբերյալ Կառլեն Հովհաննիսյան առողջական վիճակի մասին որոշման (եզրակացության) ընդունումը:
2. Ի՞նչ ժամկետներում պետք է ընդունվի վերոնշյալ որոշումը (եզրակացությունը),
3. Ո՞ր իրավական ակտերով է սահմանվում Վ. Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիայում սովորելն արգելող եւ/կամ զինվորական ծառայության պիտանելության համար անթույլատրելի հիվանդությունների ցանկը,
4. Ո՞ր իրավական ակտերով է կարգավորվում Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիայում սովորելն արգելող եւ/կամ զինվորական ծառայության պիտանելության համար անթույլատրելի հիվանդությունների վերհանման եւ որոշման (եզրակացության) ընդունման գործընթացը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան